



**Հայաստանի համայնքների միության վարչության
հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ նիստի
Որոշում**

11-ը մայիսի, 2020թ., N-Վ01

**Հայաստանի համայնքների միության 2021-2025թթ. Ռազմավարական
պլանի մշակման աշխատանքներն սկսելու և աշխատանքների
ժամանակացույցը հաստատելու մասին**

ՀՀՄ Վարչությունը որոշում է

1. 2020 թվականի մայիսի 11-ից սկել Միության 2021-2025թթ. Ռազմավարական պլանի մշակման աշխատանքները:
2. ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի մշակման համար կազմավորել Միության Հանրապետական խորհրդի առնվազն 15 անդամներից կազմված աշխատանքային խումբ Միության նախագահ Էմին Երիցյանի գլխավորությամբ: Աշխատանքային խումբը պետք է կազմավորվի այնպես, որ աշխատանքային խմբի կազմում ապահովվի մարզային, գենդերային, քաղաք-գյուղ ներկայացուցիչների հավասարակշռվածություն, կուսակցական հավասարակշռվածություն, խմբում պետք է ներգրավվեն Միության մշտական հանձնաժողովների նախագահները (կամ տեղակալները), ինչպես նաև 2-ական ներկայացուցիչներ Ավագանիների համաժողովի և Համայնքային ծառայողների համաժողովի համակարգող խորհուրդներից:
3. Խմբի անհատական կազմը հաստատել Ռազմավարական պլանի մշակման ժամանակացույցով սահմանված ժամկետներում:
4. Հաստատել կից ներկայացված Ռազմավարական պլանի մշակման և ընդունման ժամանակացույցը:

ՀՀՄ նախագահ՝

Էմին Երիցյան

ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի մշակման և ընդունման ժամանակացույց

հհ	Գործողություններ	Ժամկետ	պատասխանատու	բյուջե
1	ՀՀՄ Վարչության որոշում 2021-2025թթ Ռազմավարական պլանի մշակելու գործընթաց սկսելու և ժամանակացույցը հաստատելու մասին	Մինչև 2020թ. մայիսի 12-ը	Վարչություն	Չի պահանջվում
2	Հանրապետական խորհրդի անդամների թեկնածությունների հավաքագրում Ռազմավարական պլանի մշակման Աշխատանքային խումբ ձևավորելու նպատակով: Տեղեկացվում են ՀԽ բոլոր անդամները:	Մինչև 2020թ. հունիս 1-ը	Գործադիր տնօրեն, աշխատակազմ	Չի պահանջվում
3	Փորձագետի ներգրավում	Մինչև 2020թ. հունիսի 10-ը	Գործադիր տնօրեն	դոնոր
4	Ռազմավարական պլանի մշակման Աշխատանքային խմբի անհատական կազմի հաստատում Միության վարչության որոշմամբ	Մինչև 2020թ. հունիսի 10-ը	Վարչություն	Չի պահանջվում
5	Աշխատանքային խմբի առնվազն երեք նիստեր (աշխատակազմի և փորձագետի ներգավմամբ)	2020թ. հունիս-դեկտեմբեր	Աշխատանքային խումբ, Գործադիր տնօրեն, աշխատակազմ, փորձագետ	Միություն, դոնոր
6	Հանրապետական խորհրդի անդամների և ակտիվ համայնքների հետ քննարկում	2020թ. հուլիս-օգոստոս	Աշխատանքային խումբ, Գործադիր տնօրեն, աշխատակազմ, փորձագետ	Միություն, դոնորներ
7	ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի նախագծի մշակում	Մինչև 2020թ. օգոստոս 31-ը	Աշխատանքային խումբ, փորձագետ	Միություն, դոնորներ
8	ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի նախագծի շրջանառում բոլոր համայնքապետարանների շրջանում, հետադարձ արձագանքների ու առաջարկների հավաքագրում	Մինչև 2020թ. սեպտեմբերի 30-ը	Աշխատանքային խումբ, Աշխատակազմ, փորձագետ	Միություն, դոնորներ

9	Ռազմավարական պլանի նախագծի լրամշակված տարբերակի քննարկում Միության Վարչության նիստում, վերջնական նախագծի հաստատում	2020թ. նոյեմբեր-դեկտեմբեր	Աշխատանքային խումբ-Վարչություն, Փորձագետ	Միություն, դոնորներ
10	ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի վերջնական նախագծի հիման վրա Ռազմավարական պլանի իրագործման 2021-2022թթ. Գործողությունների պլանի նախագծի մշակում	2020 նոյեմբեր-2021 հունվար	Աշխատանքային խումբ, Փորձագետ	Միություն, դոնորներ
11	ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի նախագծի և Ռազմավարական պլանի իրագործման 2021-2022թթ. Գործողությունների պլանի նախագծի քննարկում և հաստատում Միության Հանրապետական խորհրդի նիստում	2021թ. հունվար-փետրվար	Աշխատանքային խումբ, Հանրապետական խորհուրդ, Փորձագետ	Միություն, դոնորներ
12	ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի և Ռազմավարական պլանի իրագործման 2021-2022թթ. Գործողությունների պլանի թարգմանություն անգլերեն	2021թ. փետրվար	Աշխատակազմ	Միություն, դոնորներ
13	ՀՀՄ 2021-2025թթ. Ռազմավարական պլանի և Ռազմավարական պլանի իրագործման 2021-2022թթ. Գործողությունների պլանի տարածում Միության անդամների, գործընկերների շրջանում, հանրայնացում համացանցում, տպագրություն	2021թ. փետրվար-ապրիլ	Աշխատակազմ	Միություն, դոնորներ

Ծանոթություն

1. COVID-19 համավարակով պայմանավորված կամ անհրաժեշտությունից ելնելով նիստերն ու քննարկումները կարող են կազմակերպվել նաև հեռավար կարգով: